ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ԵՔ-ԲՄԾՁԲ-19/73 » ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան, Ա. Հարությունյան, Ա. Հովհաննիսյան, Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի /բանակցությունների/ մասին

/ Ա. Կիրակոսյան /

1.1. - վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ, **-օրը՝** 31.10. 2019թ.,
-ժամը՝ 10:00

2.. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/73» ծածկագրով գնման ընթացակարգի մասով գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններին ներկայացել է միայն «Բագարանի բարիք» ՓԲԸ -ն: «Բագարանի բարիք» ՓԲԸ-ն նվազեցրել է գինը 355000 /երեք հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամով՝ առաջարկված գինը կազմել է 345000 /երեք հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/73» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվել՝ **«Բագարանի բարիք» ՓԲԸ -ն**, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

3. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Հովհաննիսյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան